

891.99

7-89

3269-57
 891.99 | Գ. Գրիգ
 Գ-89 | Մանուկյան
 1522 | 8/1081

33

21 Dec



ԳԵՈՐԳ ԳՐԻԳ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

891.99

Գ-89

Թ Ի Ֆ Լ Ի Ս

1929

01 JAN 2009

ՀՐԱՍՏԱՆԻ ՊՐՈԼԵՏԳՐՈՂՆԵՐԻ ԱՍՍՈՑԻԱՑԻԱ
№ 3 ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ № 3

1.99

պ

ԳԵՈՐԳ ԳՐԻԳ

-89

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(«ԲԱԳՈՒ» ՇԱՐՔԻՑ)

Թ Ի Ֆ Լ Ի Ս

1929

Պոլիգր. 6-րդ սպ. / Դիպլիս № 390 Տիր. 1000

25.03.2013

25867



9269-57

ՁԵԶ ՍԻՐՏՍ ԵՄ ԲԵՐՈՒՄ

Ձեզ՝ իմ յեղբայրներ,
Բերում եմ սիրտս՝ յերգերս կարմիր,
Վորը հյուսել եմ
Արշալույսներից Ձեր մեծ պայքարի,
Վորը ցողել եմ
Արյուն-քրտինքով Ձեր դառն որերի,
Վորը կոփել եմ
Աննկուն ու հաղթ Ձեր զարկով՝ մուրճի...

Յերգս Ձեր կանչն ե,
Ձեր կամքն ելեկարիկ,
Վորը կնետեմ բոլոր սրտերին,
Ովքեր ցասումն են ամբարել կրճքում—
Վորպես դու շողի,
Քւ սիրտը շինել պայթուցիկ վառող—
Սպասում կայծի...

Թողեք, վոր սիրտս լինի մի կայծը
Ձեր մեծ հրդեհի,
Լինի կաթիլը աշխարհասաան

Հուժկու հեղեղի,
 Լինի մի թուփը Ձեր դալարագեղ
 Կանաչ անտառի,
 Յեվ վերջին թևը Ձեր մեծաթռիչ
 Խոսուհի յերամի...

Հոգիս լցված ե Ձեր բյուր կանչերով,
 Ձեր բյուր յերգերով.
 Թողեք, վոր զընդա աշխարհի վրա.
 Սիրտս լցված ե
 Ձեր բյուր լույսերով, շողշող հույսերով,
 Թողեք, վոր վառեմ
 Բոլոր մթապատ ափերի վրա...

Ռ՛հ, ինչքան ափեր ու նավեր կան դեռ,
 Անկրակ, անլույս.
 Ու ծովում՝ ի՞նչքան ալեծեծ սրտեր
 Անխարխալ, անհույս...
 Թողեք, վոր սիրտս շինեմ լույս-փարոս
 Ձեր կանաչ ափին,
 Ու կանչեմ, կանչեմ դեպի մեզ յեկող
 Բոլոր նավերին...

1925 թ.

Ն Ա Վ Ը

Գնա, իմ նավ, սուրա խաղով, անցիր խուժեր հա-
 զար ու մի
 Գնա, ճչա, բարձր կանչիր մարտիկներին մեծ
 պայքարի.

Գնա, ձգիր խարխալ մեծ Արևելքի ափերին մոտ,
 կանչիր բոլոր ճնշվածներին, տանջվածներին-կանչի
 կարոտ,
 Ասա, յեկեր, վոտքի կանգնեք, աշխատավոր իմ
 յեղբայրներ

Ու թափ տվեք կապանքը ձեր--շղթաները արնանվեր.
 Ասա, յեկե՛լ՝ բերել եմ ձեզ արևաշուշան նոր, որերի,
 Ասա, յեկե՛լ՝ բերել եմ ձեզ վողջույնները միլիոններին...
 Գնա, իմ նավ, կամքս քեզ դեկ, բոռնցքս հաղթ՝

խարխալ հաստատ
 Ու Լենինյան զբոշն անպարտ զրահ ե քեզ պողպա-
 տապատ,
 Գնա--ասա, Բազուհի ենտեղ կանգնած ե հաղթ,
 տխրանալան

Սիրտը՝ միլիոն հրետանի, ձեռքը՝ միլիարդ ուռմբ
 ու ակաւն.

Ասա, անհուն կրծքում նրա յեռում ե հար նավթ
 ու բնազին

Ու շնչում ե գազի ֆանտան, ու թռչում ե յերկրի
 վազքին...

Գնա, իմ նավ, մի ուշանա, կանչիդ կարոտ սրտեր
 շատ կան,

Վոր ամի մոտ, ծովի վրա սպասում են ենքան, ենքան.
 Առ, ինչ կուղես, տար, ինչ կուղես, տար բորբոքված

կրակը մեր—
 Տար՝ թափը մեր, շաինդը մեր, կայծակը մեր—

աշխարհավեր...
 Նրանք ենտեղ արյան ծովում—անապատի ավազի տակ

ի՞նչքան ջահել սիրտ են թաղում, հույս են թաղում
 վառ ու հրակ.

Դրսից յեկող, ներսում վխտող բորենու դեմ
 արնածարավ

Յեղնում են հար, ընկնում են վար ընկերները մեր՝
 անհամար...

Ու դարերով շրթայակապ, ու դարերով լույսի կարոտ,
 Յեղ են փնտռում խավարում մութ—արեւի մեջ,

արեւին մոտ...
 Բորբոքվում են նորից, նորից կուրծք են տալիս

հրին. թրին,

Սրաատրուի, աչքը ճամբին սպասում են մեր հաղթ
 յերթին...

Գնա, ասա, Բագուն ենտեղ վառել ե մի հրաշք հանդես,
 Կրծքի վրա շողշողում են միլիոն աստղեր յերկնքի պես.

Գոտու նման մեջքին կապած Բագտրամվայը—
 յերկաթուղին,

Նոր որերի զեկը ձեռքին տեմպ ե տալիս ու ձե՛ կյանքին.
 Հալայի պես կանգնած ե հաղթ, շնչում ե միշտ կրակ

ու ծուխ,
 Թե վոր ուզի, կուշտ աշխարհը կդարձնի մի կույտ

ածուխ...

Ձեռքն աժդահա տանում ե վար, ծովը ամբողջ
 խառնում իրար,

Դուրս ե նետում նավթ ու մաղութ, գաղ ու ավաղ,
 իրձեր ու քար.

Ասա, միլիոն աչքեր ունի, ամեն աչքը մի-մի փարոս,
 Ծեր ավանի գահից ել վեր կանգնած ե հաղթ,

վորպես հերոս...
 Ասա, հենց վոր գիշերը մութ թևն ե բացում իր

ածդահա,
 Բագուն՝ արթուն միլիոն աչքով հակում ե միշտ

ծովի վրա.
 Սպասում ե գիշերն ամբողջ, նայում ե հար ջրի

հեռուն
 Ու կանչում ե, գիրկն ե կանչում փոթորկած

լողորդներուն...

Ո՞վ եւ լինի, վոր ափից դա, արաբ լինի, պարսիկ,
 ղրուզ,
 Հնդկի, ճափոն, մոնղոլ ու չին, նեզր լինի կամ թե
 հինդուս—
 Հենց վոր ձեռքին կոշա եւ անհունում ու ճակատին
 խոր ակոսներ
 Յեւ աչքերի բոցերի մեջ նոր ուրերի արշալույսներ՝
 Գիրկն եւ առնում ընկերորեն, համբուրում եւ ճակատը
 բաց,
 Դեզ եւ ղնում արնոտ վերքին ու փոխում եւ շորերը
 թաց...

Ասա՛ Բագուն պահակ եւ մի մեր նոր կյանքի
 կայարանում,
 Անցնող, դարձող գնացքների գիծն եւ փոխում,
 անմայն եւ փոխում.

Ասա՛ Բագուն հզոր մի բերդ, մի աշտարակ
 ականակուռ...
 Բագուն վուլկան հրաբորբոք, հազարաժայթք,
 մահասարսուռ...

Ասա՛ Բագուն մի զորապետ բանակներով վիշկաների
 Հաստատվել եւ ծովի ափին ու թիվ չկա կռվողներին,—
 Ամեն վիշկան—մի սև վրան, ամեն վրան— մի մեծ
 ամրոց

Ու ամրոցում լուսե ֆանտան ու ամրոցում շոխող
 ու բոց...

Ասա՛ Բագուն կապանք չունի, շղթա չունի եւ
 ձեռքերին,
 Վոչ խան ու բեզ, կապխտալիսա, վոչ եւ ալլահ—իրեն
 գլխին.

Ասա՛ ճեղքել, պատռտել եւ վարագույրը սև դարերի
 Ու դարձել եւ լուսարձակը ձեր դեռ խավար ու մութ
 յերկրի...

Ասա՛ Բագուն կգա ձեզ մոտ, կգա վորպես պայթող
 ական,

Արևելքը կհրդեհվի ու կժայթքի վորպես վուլկան...
 Գնա, իմ նավ, սուրա խաղով, անցիր խուլներ

հազար ու մի,
 Գնա, ճչա, բարձր կանչիր մարտիկներին Արևելքի:

1925 թ.

Ն Ա Վ Ը

Յեկ.

Միրտա ծովի պես ուռած,
Ծովի պես կատաղի, փոթորկոտ,
Ծովի պես յերազներով լիցուն,
Ծովի պես անհանգիստ ու տենդոտ
Սպասում ե քեզ...
Միրտա ծով ե ու իր լափերն ե կրծում,
Դե՛ յեկ...

Յեկ, յեկ, փարվեմ քեզ,
Ինչպես կապույտ ալիքները ծովի,
Ինչպես կապույտ կարոտի բոց,
Ինչպես հուր ու հնոց...

Ափին եմ կանգնել...
Միրտա անծայր կամուրջ ե դարձել.
Միրտա անթել հեռախոս,
Միրտա ճախրող սավառնակ
Քեզ ե թռչում, քեզ ե կանչում, քեզ ե տենչում...

Յեկ...

Ճեղքեր բոլոր ալիքները,
Անցիր բոլոր խութերից,
Սուրա, յեկ, մոտեցիր...

Տեսնում եմ ծուխդ կապույտ
Կապույտ յերկնքի ու ծովի վրա,
Լսում եմ շունչ ու շառաջդ՝ հրի, ջրի ու պողպատի,
Լսում եմ աղմուկներդ, սուլոցներդ զվարթ, հպարտ
Ու սպասում եմ...

Դո՛ւ անսյուն, անկամար կամուրջ,
Դո՛ւ ովկյաններ, աշխարհներ կապող,
Դո՛ւ անծանոթներ իրար ձուլող
Իմ վոսկի նավ.

Յեկ...

Ափին կանգնած ինձպես միլիոն-միլիոն՝ սրտեր
Բոցավառվել են քեզ համար՝ վորպես փարոս,
Միլիոն-միլիոն ձեռքեր ջլապինդ բարձրացել են
Քեզ ափին մոտ քաշելու,
Յեկ միլիոն-միլիոն աչքեր կարոտի ու հրճվանքի
Արցունքներ են թափում...

Գիտեմ՝

Դու հրաբորբոք ես ու բոցավառ,
 Հազար սիրտ ե քո մեջ յերգում ու խոսում,
 Հազար խոսքեր ունես ասելու. —
 Հազար-հազար հեռու-մոտիկ ընկերներին ես բերում...

Յեկ, բեր...

Բեր նրանց յերգերը կարմիր,
 Բեր նրանց սրտի հուրը բոցաշունչ,
 Մըրիկը կատաղի, թեափոր,
 Յեկ... բեր...

1925 թ.

ՆՎԵՐ ԲԱԳՎԻ ՇԵՐՈՍՆԵՐԻՆՆ*)

Ընկերներին, ընկերներին եմ կանչում՝
 Ընդվզումի կարմիր յերգս լսելու.
 Աշխատանքի, մուրճ ու սալի, գուլթանի
 Արիասիրտ ընկերներին եմ կանչում...

Նզովքի պես, անեծքի պես սև, դաժան,
 Իմպերիալիստ բանականները արնատենչ—
 Յեվ արյունով, և՛ ավերով անսահման
 Ահա յեկել, շղթայել են հաղթ Բագուն.
 Շղթայել են, նյութել հազար մութ դարան,
 Շղթայել են աշխատանքը հաղթական,
 Լուռ են, տխուր արհեստանոց-գործարան,
 Լուռ ե, խոհուն կապույտ լիճը Վրկանա...
 Բայց լսում եմ հեռահոսուն մի աղմուկ,

*) Այս բանաստեղծությունը 1918 թվին «Աշխատավոր»
 թերթը հրաժարվեց տպել Ծանոթ. հեղինակի.

Անէծք եւ այն, թե՛ մի զայրույթ աշխարհին,
 Զայրացե՛լ եւ կապույտ լիճը վրկանա,
 Թե հաղթական աշխատանքն եւ հինորյա...
 Մուրճ ու սալի վորդիները գունդագունդ
 Մի նոր ձևի աշխատանքով անսովոր
 Լուսաժպիտ, և՛ ջլապինդ, և՛ խրոխտ
 Դարբնում են յերազական մի նոր որ—
 Ու նոր որվա արշալույսին յերփներանդ
 Զոհ են բերում հազար արցունք, հազար կյանք...

Ընկերներիս, ընկերներիս եմ կանչում՝
 Ընդվզումի կարմիր յերգս լսելու.
 Աշխատանքի, մուրճ ու սալի, գութանի,
 Արիասիրտ ընկերներիս իմ կանչում...

1918 թ. Թիֆլիս.

ՔՍԱՆՎԵՑ ԿՈՄՍՈՒՆԱՐՆԵՐԻՆ

I

Այս ավերով, այս ճամբեքով նրանք յեկան,
 Այս ջրերին, այս նավերին վողջույն ավին,
 Հարաբորբոք ֆանտաններին, վիշկաներին
 Հրով վառված լողունգները իրենց բերին...

Այնտեղ ահա կուտակվեցին գնդերն հուժկու,
 Այս զավոդում հորդեց նրանց խոսքը արդար.
 Այստեղ, աշտեղ պատահեցին մեկը մեկու.
 Հազար-հազար բանվորություն ու կոմսունար...

Այս փողոցում, այն շենքի տակ, այն զավոդում,
 Այստեղ հորդաց կռիվն համառ, յերկարատև,
 Մինչև կորավ խավարն իսպառ՝ գիշերը մութ,
 Մինչև ծագեց ազատարհը մի նոր արև...

Քո պես խոհուն, քո պես անհուն հոգին նրանց,
Հայացքները խորունկ, խորունկ քո սրտի պես,
Ծով իմ սիրուն, քո ջրերով անցան անդարձ
Քսանվեց ընտիր կոմմունարներ հպարտ ու վես...

Ի՞նչ ասացին քո ջրերին փոթորկածին
Կոհակներիդ հազարանաղ ու վոսկեշող,
Ու հողմերին ու կողմերին աշխարհներին,
Աննցող, դարձող վողջ նավերին ի՞նչ ասացին...

Ձե՞ վոր նրանց հոգու ծովում փոթորիկ կար,
Ահեղ ցասում, անհուն վրեժ, անսանձ արբիկ.
Ձե՞ վոր նրանց նավը նստից պիտի յե՞ս գար,
Պիտի յես գար, փշրեր միլիոն ցավ ու կարիք...

Ի՞նչ ասացին մոտիկ անցնող թռչուններին,
Հին ափերին, սև տափերին մշուշապատ.
Յերկնում փայլող, մեղմիվ ժպտող լույս աստղերին,
Յե՞վ արևին, և՛ աշխարհին ի՞նչ ասացին...

Քո պես խոհուն, քո պես անհուն հոգին նրանց,
Հայացքները խորունկ, խորունկ քո սրտի պես.
Ծով իմ սիրուն, քո ջրերով անցան անդարձ
Քսանվեց ընտիր կոմմունարներ հպարտ ու վես...

Յերբ արևը տխուր հանգավ անապատի հեռաստանում
Յե՞վ գիշերը խորհրդավոր փռեց թևերն իր անավոր,
Յերբ ամեն ինչ մարեց, մեջեց, յերբ դադարեց ամեն
ՀՐՋՈՒՆ՝
Անապատի հեռու-հեռվում լավեց ինչ-վոր հեք ու
փնջյուն...

Ծթնում փայլեց յերկու կրակ, վորպես արնոտ յերկու
մեծ աչք,
Հգույժ շողաց մի սև մարմին — յերկարածիգ, վորպես
վիշապ.
Ապա մոտիկ լավեց հատու շոգեշարժի շառաչ ու
թանչք,
Ու գնացքը քսանվեցի Ախչա-Կույմա հասավ շտապ...

Գիշեր, խավար, սարսափ, սոսկում,՝ փափնուկներ
խորհրդավոր,
Անց ու դարձեր զաղտագողի, հրամաններ շտապ,
հատու.
Ու կանգ առան իրարու դեմ, դժգեմ, դաժան դահիճ
ու զոհ,
Հայացքների սուր սվիտով խոր փոփնեցին սիրտն
իրարու...

9269-57



Խորհրդավոր խոր լուսթյուն... Վայրկյանը մի հազար
տարի...
Մտքեր, մտքեր ցան ու ցրիվ և ապրումներ

կոմունարի...
Պայծառ, գզվող, քաղցր հուշեր, ժպտուն դեմքեր
ընկերներին,
Յեվ հաղթական վառ դրվագներ անցյալ, անցյալ
սլաքաբարներին...

Այժմ մահվան անդունդը բաց, գերեզմանը
վտարների մոտ,
Խորքում իրենց դիերն ընկած, սրտերն իրենց
կտոր-կտոր...
Հազար, հազար ոձ ու կարիձ, արյունարբու ցին
ու ազնավ,
Յեվ շակալներ անկուշտ, ազահ, բորենիներ
արնածարավ...

Ինչհիւ, ինչհիւ չեն կրակում, հեգնում և մեզ չար
թշնամին,
Խնդում և մեր դաժան մահով, տանջում և մեզ
մահու ահով...

— Հէյ, զարկեցեք, ի՞նչ եք կանգնել, շտապեցեք,
վա՛յ ձեզ, վա՛յ ձեզ,
Մահվան հանգեպ դուք ել մի որ պիտի կանգնեք
մեզ պես—եսպես...

— Սպասեցեք, կգա մի որ, մեր հատուցման որը պայծառ,
ընկերները մեր կոմունար հաղթ շարքերով նորից կգան,
Վերջ կլինի ձեր բռնության, ձեր վոճրագործ

իշխանության,
Մոտ և, մոտ և, աղատարեր արշալույսը արեգական...

— Հէյ, զարկեցեք, ի՞նչ եք դողում, ի՞նչ եք սողում
վորպես սև ոձ...
Դուք սրիկա, ստոր մարդիկ, վարձկան, վարձկան

հացկատակներ...
Հանկարծ ճայթյուն, համազարկեր, ճիչ, աղաղակ,
անեծք, տնքոց,
Ու վայր ընկան կրծքից զարկված քսանվեց ըմբոստ
կոմունարներ...

IV

Հեռածավալ անապատում նրանք ընկան մենակ, անոգ,
Ու չլսվեց կանչը նրանց, ու չհասավ վոչ վոք, վոչ վոք...

Նրանք ընկան արնաշաղախ հրե խոսքը իրենց շրթին,
Արշալույսվող նոր որերի, մեր նոր կյանքի կարժիր
շեմքին...

Ծով աչքերով իրենց ծարավ լուռ չափեցին ճամփի
հեռուն,
Յերկար, յերկար սպասեցին ընկերների մոտենալուն...

Մնաս բարով ասին իրար, համբուրվեցին ջերմ,
կաթոգին,
Ու կանգնեցին շարան-շարան, կուրծքը տված սև
զնդակին ..
Մահու հանդեպ խիզախ յեղան, թշնամու դեմ
հպարտ, արի,
Ու հպարտված նրանք ընկան ըմբոստ մահով
կոմմունարի...

Նրանք ընկան անսպասում շարան-շարան իրարու քով,
իրար կապված, միշտ անբաժան իրենց մահով,
իրենց կյանքով...
Նրանք ընկան արնաշաղախ հրե խոսքը իրենց շրթին,
Արշալույսվող նոր որերի, մեր նոր կյանքի կարմիր
շեմքին...

1928 թ.

Շ Ա Տ Ր Վ Ա Ն

Զարկ, շատրվան, խփիր ուժգին
Յեւ մռնչա, և՛ կատաղիր,
Յեւ գաղազած յերկինք նետիր
Սուր զմբեթը սև վիշկայի.
Զե՛ վոր գիտեմ դարերի վեր
Յերկրի խորքում թույն ես քամել.
Զե՛ վոր գիտեմ ծանր մի բեռ
Ճնշել ե քեզ հազար դարեր...
Զե՛ վոր գիտեմ հոգուդ խորքում
Փայփայել ես մի լույս արև,
Գազ ես դառել գյուրաբորբոք
Ու միշտ ձգտել վերև-վերև...

Զարկ, շատրվան, խփիր ուժգին.
Քո բորբոքված տենդոտ հոգին
Հերիք ինչքան խեղդված մնաց
Յերկրի խորքում խոնավ ու թաց.
Հերիք, ինչքան խավարամած

Շերտերի տակ յիւր փնտռեցիր
 Յեւ հրածին սիրտդ լուսեղ
 Խորունկ բանտում գուր մաշեցիր...
 Դէ, զարկ հիմի ուժգին, կրկին,
 Հոսիւր վորպես լուսե մի գետ.
 Թող վոր կորչի խավարն անհետ
 Քո գոռ, անեղ շառաչից եդ...

Զարկ, շատրվան, հորդիւր ուժգին,
 Չէ վոր պիտի վառվես, շողաս
 Հազար, հազար ափերի մոտ.
 Չէ վոր պիտի կանչես, փրկես
 Մըրկածուփ ծովից անծայր
 Ընկերներիս մոտ ու ծանոթ.
 Չէ վոր պիտի լույս տաս, հույս տաս
 Շողի կարոտ գյուղին թխպոտ,
 Յեւ քաղաքին, գործարանին,
 Յեւ նավերին, անիմներին,
 Յեւ յերկնաթիռ պողպատաթև
 Թռչունին մեր՝ պիտի տաս հե...

Զարկ, շատրվան, խփիր, հորդիւր...
 Սիրտս քո մեծ հորձանքն ունի,
 Սիրտս գաղի ֆանտան ե մի,
 Սիրտս յելած գետ ե լույսի...

Ու քո ուժի, թափի, հրի
 Շռինդն ունի, բոցերն ունի...
 Ամեն յերկրում, ամեն ճամբի,
 Ամեն ափի—պիտի շողամ,
 Պիտի վառվեմ վորպես փարոս...
 Մինչև մեռնի վերջին հյուղում
 Խավարը չար, մինչև ծագի
 Վողջ աշխարհին՝ Մեծ Արշալույս...

1925 թ.

Ծ Ո Վ Ը

Ծնվ, մոռնա, ալեկոծվիր,

Ծնվ, կատաղիր ու դողդողա,

Յեվ գալարվիր, և՛ գազազիր,

Յեվ փոթորկվիր միլիոն անգամ...

Ելի պիտի մեղմիմ հեա իմ վոտքի տակ,

Ելի պիտի հիվանդ նվառ ու աղերսես,

Ելի պիտի անգոր տնքաս ու արտասվես...

Քո ջրիչափ արյուն եմ յես թափել հստեղ...

Քո ջրիչափ քրտինք եմ յես հեղել հստեղ,

Քո շառաչից ավելի մեծ շոխնդ ունեմ,

Քո ավազից ավելի շատ մորիկ ունեմ...

Ծնվ, արտասվիր, ծնվ, աղերսիր—

Յեվ մրրկվիր, և՛ գալարվիր,

Ինչքան կուգես բարձր ճշա

Յեվ մոռնա, և քրքջա...

Ելի պիտի կռակս վառ շուրթդ կիզես,

Ելի պիտի կամքիս նավը կուրծքդ ակոսես,

Ելի պիտի խարխիսս սուր սիրտդ ծակես...

Ամեն ջրում, ամեն ափում—ամեն յերկրի

Նավեր ունեմ, բանակ ունեմ ընկերների,

Քեզնից ել լայն, քեզնից ել խոր, քեզնից հզոր

Փոված եմ յես արևի պես բարկ ու բոսոր...

1925 թ.

Թ Ր Ք Ո Ի Ն Ի

Նուրբ նազերով, նուրբ խաղերով վորպես թեթև յեղնիկ

Ժողով յեկավ մի թրքունի, մի նազելի աղջիկ,

Աչքերը սև վորպես գիշեր, խորհրդավոր ու խոր

Սևի վրա վառած հրեր, ասես աստղեր բոսոր...

Յեկավ խնդուն, յեկավ ժպտուն հաղթանակից դարձած,

Կուրծքը հպարտ, աչքը անթարթ—ասես գարուն

ծաղկած,

Վարսերը ճոխ անփուլթ փռած ուսերին ու մեջքին,

Շորորում եր յեղնիկի պես, յեղնիկի պես նրբին...

Այնպես գերող, այնպես շոյող, այնպես բաղցր եր

խոսում,

Ձայնը այնպես նուրբ եր հնչում—ասես յերգ եր

հոսում.

— Իմ ընկերներ, դարձավ նա մեզ, իմ յեղբայրներ

անգին,

Ձեզ եմ բերում սիրտս կարմիր և իմ տանջված

հոգին...

Դարեր, դարեր տառապել ենք հարեմ-բանտում
 «վոսկի»,
 Յերազել ենք, արտասովել ենք... կարոտ ազատ խոսքի.
 Ու մեր լեզվի, ու մեր մտքի, ու մեր սրտի վրա
 Յեղել ե մի ծանր կապանք—մի արնաներկ շղթա...

— Ի՞մ յեղբայրներ, դարձավ նա մեզ, իմ ընկերներ
 անգին,
 Ձեզ եմ բերում սիրտս կարմիր ու իմ տանջված
 հոգին.
 Լույս որերի հրով վառված թողեք կանչեմ կրկին—
 Թրքուհիներ, տանջված քույրեր, վոտքի յեկեք
 ուժգին:

1926 թ.

Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն Ո Ւ Մ

Սև քաղաքի գործարանում մեր հսկա
 Աշխատում են մեզ հետ մի խումբ կին, աղջիկ,
 Մեկը կայտառ, մշտածիծաղ, սևաչյա
 Ժպտում ե միշտ, թեք-թեք նայում գեղեցիկ...

Սմեն անդա՛ր շշակների կանչի հետ,
 Յերբ վազե-վազ գործարան եմ շտապում,
 Պատահում եմ նրան արագ քայլելիս,
 Վոր թեք նայում, և՛ ժպտում ե, և՛ անցնում:

Գործի ժամին անիվների ժխորում
 Յերգում ե նա բարձր, քաղցր, գեղեցիկ,
 Ապա առողջ ծիծաղում ե, կատակում,
 Նայում ե քեզ իր աչքերով նետածիք...

Ակամայից ծիծաղում ես դու ել հեզ,
 Ժպտում անուշ, և՛ կատակում, և՛ յերգում,
 Ծավալվում ե շուրջդ ուրախ մի հանդես,
 Աշխատանքդ այնպես անուշ ե թվում...

Սև քաղաքի գործարանում մեր հսկա
 Մեկը կայտառ, մշտածիծաղ, սևաչյա,
 Աշխատում ե, և՛ ժպտում ե, և՛ յերգում,
 Շուրջդ քաղցր մի ջերմություն ծավալում...

1926 թ.

Ա Ն Յ Յ Ա Լ Ը

Աշնանային մի որ, իրիկնային մութին,
Մեր քաղաքի այգու անց ու դարձից հեռու,
Տեսա յերկու ծերի, յերկու սառած ուրու
Աշնանային մի որ, իրիկնային մութին:

Աշնան որվա նման մռայլ, գունատ, ամպած
Նրանց սրտում չկար նշույլ վոչ մի հրի.
Նստել էին մենակ թիկնած մի-մի ծառի
Աշնան որվա նման մռայլ, գունատ, ամպած...

Պատմում էին անցած «լավ որերի» մասին,
Խոկում էին տխուր, ժպտում էին կիսատ,
Հառաչանքով մեռնով ու հուշերով ընդհատ
Պատմում էին անցած «լավ որերի» մասին...

Յերկու ծերի գլխին՝ յերկու ծառն էլ բեկված
Դողում էին զգույշ ու սվսվում գունատ.
Մաղում էին, թափում տերևները հատ-հատ...
Յերկու ծերի գլխին՝ յերկու ծառն էլ բեկված...

Աշնանային մի որ, իրիկնային մութին,
Մեր քաղաքի այգու անց ու դարձից հեռու
Տեսա յերկու ծերի, յերկու սառած ուրու
Աշնանային մի որ, իրիկնային մութին...

Վ Ո Ղ Ջ ՈՒ Յ Ն

(Հայաստանի խորհրդայնացման ութամյակին)

Դարձա նորից, յեկա ուրախ տունը իմ,
Յեկա նորոգ, վերածնված լուսավոր,
Վողջունեցի ձեզ ջերմորեն, մտերիմ
Աշխատանքի ընկերներ իմ բյուրավոր...

Յեկա տեսա միլիոն սրտեր արևոտ,
Շեն քաղաքներ, հիդրոշեններ, զավոգներ,
Բոլորը վառ, բոլորը ժիր ու տեմպոտ,
Վորպես ջահել, լուսաժպիտ պիոներ...

Յերբ գնացի, մուխ ու մոխիր եր միայն,
Սոցի եր շրջում մեր դաշտերում ամայի,
Շուրջս դեղնած տերևաթափն եր աշնան,
Շուրջս արյուն, շուրջս ավեր ամեհի...

Յերբ գնացի, ժպիտ չկար մեր սրտին,
Փակվել էին վողջ դռները փրկության,
Զափ ու սահման չկար արնոտ մեր վշտին,
Միլիոն սրտեր գունատվեցին ու ընկան...

Հիմի ուրիշ, ուրիշ ե մեր կյանքը նոր,
Մոռացվել են հուշերն անդամ անցյալի,
Ամեն ուրը նոր հաղթանակ զորավոր,
Խիստ ու ժպիտ, սեր ու գգվանք լիուլի...

Հիմի կանաչ մեր դաշտերում խոր ու լայն
Շինականի անուշ յերգն ե ծավալվում,
Զրնգում ե գերանդին ու մեքենան,
Աշխատանքը հրաշքներ ե կատարում...

Անապատը հիմի գունեղ ծաղկածով,
Խոպան դաշտը մի ջրառատ լայն հովիտ,
Աղբյուրները կաթնափրփուր հոգեթով,
Ինձ են կանչում գգվանքածին կարոտով:

Յերկիրը մեր լուսաժպիտ պիոններ,
Հուր աչքերը հովտեմբերյան լուսարձակ,
Ժպիտները վարդափթիթ համբույրներ,
Սիրտը լուսեղ, բոցավառված ու հրակ...

Դարձա նորից, յեկա ուրախ տունը իմ,
Յեկա նորոգ, վերածնված լուսավոր,
Վողջունեցի ձեզ ջերմորեն—մտերիմ,
Աշխատանքի ընկերներ իմ բյուրավոր:

Z N 4 S E U F E R U 4 U Ն

Տառ տարի

Հեյ, հեռու ափերի, լայնարձակ տափերի
Հալածված ընկերներ քաջարի,
Մեր սիրտը, մեր միտքը, մեր հողին ձեզ համար
Կիզել ենք՝ տաս տարի, տաս տարի...

Լավերի տանջողին, նենգամիտ վոսոխին
Կանչել ենք արյունոտ պայքարի,
Ավերում, ցավերում, դավերում անսահման՝
Կռվել ենք տաս տարի, տաս տարի...

Աշխարհի կողմերին, մահաբեր հողմերին
Մենք կուրծք ու ճակատ ենք տվել,
Մեր սիրտը առնական, մեր յերթը հաղթական.
Հզոր ենք, աննկուն, ել ավել...

Կանչել ենք ամենքին՝ ում հողին դառնադին
Որերի մրուրն ե ճաշակել

Կռվել ենք միասին, ձգտել ենք նոր լույսին
Դիրքերից վնչ մեկը չենք լքել...

Կարգերը հնամյա ջնջել ենք մենք հիմա,
Ճանել ենք սերմերը նոր կյանքի
Կիզվել ենք արևից, ծաղիկից ու տապից,
Վառել ենք ջահերը գալիքի...

Տաս տարի պարծանքի, տաս տարի հրճվանքի,
Տաս տարի խնդուծյան ու վարդի,
Տաս տարի պայքարի, տաս տարի վեճերի,
Տաս տարի հաղթական ուղիների...

1937 թ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0338228

Գեորգ Գրիգը ծնվել է գյուղական միջակ ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղական դպրոցում, իսկ միջնակարգը—Յերևանի թեմական դպրոցում:

1924 թվականին ավարտում է Թիֆլիսի Պոլիտեխնիկական Ինստիտուտի տեխագիտական ֆակուլտետը:

Սկսել է գրել մանկական հասակից: Մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը գրել է մեծ մասամբ սիրային բանաստեղծություններ: Անդրկովկասի խորհրդայնացահեռ նվերվում է պրոլետարիատին ու նրա հեղափոխական պայքարին: Անդամ է Վլադիմիր Զայ պրոլետգրողների ասոցիացիային, նրա կազմակերպության որից: Գրելի բանաստ. տպված են մեր որերի մի շարք պարբերականներում ու ժողովածուներում: Առանձին հրատարակությամբ լույս է տեսել նրա բանաստեղծությունների փոքրիկ զբոսայգը «Յերկաթե յերգեր» 1926 թ.:

ԳԻՆԸ

ՇՈՒՏՈՒՄ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

- | | |
|-------------------|---------------------|
| 1. ՄԱՐՏԻՆ | Պատվածներ |
| 2. Վ. ՍԻՄՈՆՅԱՆ | Բանաստեղծություններ |
| 3. Մ. ԳԱՐԲԻՆՅԱՆ | «Նորը» |
| 4. ՀՌ. ՊՈՂՈՍՅԱՆ | Բանաստեղծություններ |
| 5. ԲԱՆՎԱՐ ԱՄԻՐ | Պատվածներ |
| 6. ԲԱՆՎԱՐ ԿՈՐՅՈՒՆ | Բանաստեղծություններ |
| 7. ՌՈՒԲ. ԱՂԱԲԱԲ | «Լիրիկա» |
| 8. ՊԱՅԱԶԱՏ | «Պատվածներ» |
| 9. Գ. ԽԱՂԱԹ | Բանաստեղծություններ |



25867